ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ս-15

ք. Երևան «03» «02» 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ և Գ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **44 000 000** (քառասունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև **01.01.2026** թվականից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«ՖՎ և Գ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ ք. Երևան, Ազատության 24, 4
ՀՀ Ֆինանսների նախարարության	շինություն
գործառնական վարչություն	Բանկ՝ «Արմսվիսբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011042471	Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 03004979
Հեռ. 010 59-61-52	Հեռ: 010 20-81-72
Էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am	Էլ. Փոստ: info@fvg.am
_____ Ա. Ֆիդանյան	---------- Վ. Ղազարյան
/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ)

Հավել
«03» 02 2026թ.
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ս-15 ծածկագրով պայմ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ծառայության մատուցման ժամկետը**	
						Սկիզբը	Ավարտը
1	72261160/5	**ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ** Ծրագրային ապահովման սպասարկումը ընդգրկում է հետևյալ հիմնական աշխատանքները -Տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ցանցի կառավարում և սպասարկում 24/7 սխեմայով -Մարզերի կապուղիների սպասարկումը կատարվում է զանգերի գրանցման կենտրոնի(Call Center) միջոցով, վարել կատարված զանգերի մշտադիտարկում, պարբերաբար ներկայացնել հաշվետվություն խափանումների և այլ խնդիրների վերաբերյալ -Աբոնենտային սարքավորումների սպասարկում (տեխնիկական և ծրագրային ապահովմամբ) թվով 119 հատ - Խափանված ցանցային սարքավորումների վերանորոգում կամ փոխարինում - Գերատեսչական ցանցի արդիականացում համապատասխան ժամանակի պահանջի -Ոստիկանության գեր. ցանցի միացման կազմակերպում այլ գերատեսչությունների հետ -ցանցային հանգույցների մոնիթորինգ -պատահարների գրանցում և վերլուծություն -ցանցի տարբեր հատվածներում գերբեռնվածության ախտորոշում և	դրամ	44000000	դրամ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	29. 12. 2026թ

ընտանի

(ինտերնետային ծառայություններ, սարքավորումներ) գործարկում բոլոր դրամական եղանակներով

գործարկման գործընթաց - տարանցիկ կապակցումներ և գրանցում

(Լ-եր)

- Համակարգային տարանվանումների կառավարման համակարգ

գործարկման կառավարման ընթացքի փոփոխություն, նիստի հայտնաբերում

գործարկման եղանակներ և տարանվանումների կառավարման համակարգ

(VLAN-ներ) պատկանող ընդհանրացված ռեսուրսներ

-VPN մեխանիզմների միակցման կետերի, կամ միակ տուսարկիչ և տարանվանումների կառավարման

-Հիմնական կամուրջներ և հանրային ինտերնետի ծառայությունների ապահովման սեղմման գործընթաց, ցանցային գերծանրաբեռնվածության դեպքում

-Սարքավորումների ընդհանրացված ինտերֆեյսներ և կապակցման ինտերֆեյսներ:

-Ինտերֆեյսը և տեղեկությունը ապահովում է տարբերակված ինտերֆեյսների միջոցով տարբերակված ինտերֆեյսներ:

<տարբերակ սարքավորումների համար 24 ժամվա ընթացքում:

-<< սարքավորման ստանդարտ ինտերֆեյսներ 5 ժամվա ընթացքում:

խմբագրված

մեխանիզմներ և բազմաստիճան կառավարման համակարգեր 2 աշխատանքային օրվա ընթացքում:

<տարբերակ սարքավորումների համար 1 ամսվա ընթացքում հնարավոր է ապահովել ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ մասշտաբով:

մանրամասն տեղեկություն ինտերֆեյսների վերաբերյալ (գծերի տիպ, ինտերֆեյսի տեսակ, կարգավիճակ, մակարդակ, հասցե, մասնավոր հասցե, ինտերֆեյսի ինդեքս, ինտերֆեյսի անվանում, ինտերֆեյսի նկարագրություն, ինտերֆեյսի ֆիզիկական հասցե, ինտերֆեյսի ինդեքս, ինտերֆեյսի տեսակ, ինտերֆեյսի կարգավիճակ, ինտերֆեյսի մակարդակ, ինտերֆեյսի հասցե, ինտերֆեյսի մասնավոր

անհրաժեշտության դեպքում ավել, պրոֆիլակտիկ կերպով այցելել բոլոր 119 սպասարկման կետերը, գրանցել աշխատանքային պայմանները, սարքավորումների տեխնիկական վիճակը, աջակցել օգտվող անձնակազմին:
-Սպասարկող ընկերությունը պետք է ունենա առնվազն 10 տարվա փորձ, նմանատիպ ցանցերի (<< ողջ տարածքում) սպասարկման ոլորտում:
-Սպասարկող անձնակազմը պետք է տիրապետի առկա ցանցային սարքավորումների (Cisco, Juniper, և այլն) տեխնիկական և ծրագրային պահանջներին:
-ծրագրային ապահովման սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարացքում հետևյալ հասցեներով:

	Տարածա-շրջան	Հասցե	
1.	Արագածոտն	Աշտարակի ՈԲ - Աշտարակ ՏիգրանՄեծ 46	
2.	Արագածոտն	Թալինի ՈԲ - Թալին Գորկու 14	
3.	Արագածոտն	Արագածի ՈԲ - գ. Ծաղկահովիտ Բժշկյանց 5	
4.	Արագածոտն	Ապարանի ՈԲ - Ապարան Գայի 9	
5.	Արագածոտն	ՄՎ - Աշտարակ Երևանյան 1	
6.	Արարատ	Արարատի ՈԲ - Արարատ Շահումյանի 12	
7.	Արարատ	Արարատի ՈԲ - Վեդի Չարենցի1	
8.	Արարատ	Արտաշատի ՈԲ - Արտաշատ Շահումյան 20	
9.	Արարատ	Մասիսի ՈԲ ն - Մասիս - Բաղրամյան 30	
10.	Արարատ	ԱրարատիՄՎ - Արտաշատ Օգոստոսի 23-122	
11.	Արարատ	ՃԿԿ՝ Ճգնաժամային կառավարման կենտրոն - Արտաշատ Մանկական պոլիկլինիկայի շենք	
12.	Արմավիր	Արմավիրի ՈԲ - Արմավիր Ջիվանու շենք 3	
13.	Արմավիր	Վաղարշապատի ՈԲ - Կամո 15	
14.	Արմավիր	Բաղրամյանի ՈԲ - գ. Բաղրամյան Բաղրամյան 2	

		15.	Արմավիր	Մեծամորի Պարեկային Ծառ. Քաղաքապետարանի շենքի հետևը -> 12						
		16.	Արմավիր	Արմավիր, ԱԵԿ						
		17.	Արմավիր	Արմավիրի ՄՎ - Արմավիր Հանրապետության 22						
		18.	Արմավիր	Զվարթնոց օդ. Հերթապահ մաս						
		19.	Գեղարքունիք	Գեղարքունիքի ՄՎ - ք.Գավառ, Օգոստոսի 23 շենք 36						
		20.	Գեղարքունիք	Սևանի բաժին - Սևան Դեմիրճյան 8						
		21.	Գեղարքունիք	Մարտունու ՈԲ - Մարտունի Մյասնիկյան 5						
		22.	Գեղարքունիք	Գավառիբաժին - Գավառ Սայադյան 91						
		23.	Գեղարքունիք	Վարդենիսի ՈԲ - Վարդենիս Ազգալդյան 3						
		24.	Գեղարքունիք	Ճամբարակի ՈԲ - Ճամբարակ ԳարեգինՆժդեհի 122						
		25.	Երևան	Ազատության 24, 4 շինություն, Կենտրոնական հանգույց						
		26.	Երևան	Մամիկոնյանց 1, Արաբկիրի ՈԲ						
		27.	Երևան	Ինտերպոլ - **Զաքարիա Քանաքեռցու 48**						
		28.	Երևան	ՆԳՆ - Նալբանդյան 130						
		29.	Երևան	Նալբանդյան 13 - ՀՄ Սոցապ ծառայություն						
		30.	Երևան	Սիմոն Վրացյան 90						
		31.	Երևան	Ծովակալ Իսակովի 29 -> Ոստիկանության Ակադեմիա						
		32.	Երևան	Ծովակալ Իսակովի 25 Ներքին Զորքեր զորամա						
		33.	Երևան	Ծովակալ Իսակովի պ. 7 - Ավտոպարկ						
		34.	Երևան	Մոսկովյան 1, Հակակոռուպցիոն ծառայություն						
		35.	Երևան	Աիարոնյան 3 - Քանաքեռ-Զեյթուն ՈԲ						

		36.	Երևան	ԳարեգինՆժդեհ 27 - Շենգավիթ ՈԲ						
		37.	Երևան	Մովսեսխորենացի 162 - Էրեբունի ՈԲ						
		38.	Երևան	ԱրաՍարգսյան 22 - Մալաթիա ՈԲ						
		39.	Երևան	Շինարարների 10/1 - Մաշտոց ՈԲ						
		40.	Երևան	Բորյան 1 - Նոր Նորք						
		41.	Երևան	Արցախի 8/16, ՓՔՎ՝ Փորձաքննությունների լաբորոտորիա						
		42.	Երևան	Դավիթաշեն 4-րդթաղամաս, հ.17/10; ԱՎՎ						
		43.	Երևան	Դավիթաշեն 1032 զորամաս, ՀՀոստ. Զորքեր						
		44.	Երևան	Դավիթաշեն 1032 զորամաս, Վարչություն						
		45.	Երևան	Իսահակյան 2, Ավանի ՈԲ						
		46.	Երևան	Մետրոպոլիտենի պահպ.բաժին - Մարշալ Բաղրամյան 76						
		47.	Երևան	ՊՊԳՎ - Քանաքեռ 14, 1 շենք						
		48.	Երևան	Բագրատունյաց 6-րդնրբ - Ներքին Զորքեր զորամաս						
		49.	Երևան	Աբովյան 54 - Բուժ. վարչ.						
		50.	Երևան	Նուբարաշեն 1փ. 13ա - Նուբարաշենի ռադիոկայան						
		51.	Երևան	ք.Երևան, Հերացի 5/1 - Դատաբժշկական						
		52.	Երևան	Վարդանանց 69 - Դինամո ՄՖՊ						
		53.	Երևան	Քաջազնունի 11 - Մարաշ ՈԲ						
		54.	Երևան	Տուգանային Հրապարակ						
		55.	Երևան	Նուբարաշենի խճուղ 14 - Նուբարաշեն ՈԲ						
		56.	Երևան	Խանջյան 51 - Երևանի ոստիկանության վարչ.						
		57.	Երևան	Պռոշյան 1 նրբ. 20 - Նախագահի անվտանգություն						

		58.	Երևան	ՊՎԾ Պետական վերահսկողության ծառայություն - Մեսրոպ Մաշտոցի պ. 47						
		59.	Երևան	Ֆինանսների Նախարարություն՝ Գանձապետարան - Մելիք Ադամյան 1						
		60.	Երևան	Հայփոստ - Սարյան 22						
		61.	Երևան	ԱԻՆ - Եղվարդի 3րդ ձոր						
		62.	Երևան	Հեռուստաաշտարակ Պարեկային ծառայության համար - Դավիթ Բեկի						
		63.	Երևան	Հեռուստաաշտարակ Պարեկային ծառայության համար - Կոմիտաս պ. Պետ. Ստանդարների շենք						
		64.	Երևան	Անձնագրային սեղան - Զաքյան 3						
		65.	Երևան	Դավթաշեն ՈԲ - Դավթաշեն 4-րդ թաղ. 31/2						
		66.	Երևան	Շտապ օգնության զանգերի գրանցման կենտրոն - Զորափի 40						
		67.	Երևան	Պետական Անվտանգություն - Ղափանցյան 12						
		68.	Երևան	Կառավարություն - Մելիք Ադամյան 1						
		69.	Լոռի	Տաշիրի ՈԲ - Տաշիր Պուշկինի 100						
		70.	Լոռի	Սպիտակի ՈԲ - Սպիտակ Ալեք Մանուկյան 1Ա						
		71.	Լոռի	Ստեփանավանի ՈԲ - Ստեփանավան Սոս Սարգսյան 37						
		72.	Լոռի	Վանաձորի Տարոնի ՈԲ - Վանաձոր, ՄխիթարԳոշի 3						
		73.	Լոռի	Վանաձորի Բազումի ՈԲ - Վանաձոր Ռուտավի 1						
		74.	Լոռի	Գուգարքի ՈԲ - գ.Գուգարք, 1 փողոց 8 շենք						
		75.	Լոռի	Լոռ ՄՎ - Վանաձոր Տիգրան Մեծի պ. 1						
		76.	Լոռի	Թումանյանի ՈԲ - Ալավերդի Թումանյան պ. 1						

		77.	Լոռի	Հանրային ծառայությունների միասնական կենտրոն - Վանաձոր Տիգրան Մեծի պ. 18						
		78.	Լոռի	Պարեկային ծառայություն - Վանաձոր Լոռու **1**						
		79.	Լոռի	Հեռուստաաշտարակ՝ Պարեկային ծառայության համար - Վանաձոր						
		80.	Լոռի	Հեռուստաաշտարակ Պարեկային ծառայության համար - Սպիտակ						
		81.	Կոտայք	Հրազդանի **ՈԲ** - Հրազդան Ֆիդայիների 1						
		82.	Կոտայք	Աբովյանի ՈԲ - Աբովյան ՀորավարԱնդրանիկի 5						
		83.	Կոտայք	Չարենցավանի ՈԲ - Չարենցավան **6-րդ թաղ.** Շահումյան 1						
		84.	Կոտայք	Եղվարդ ՈԲ - Եղվարդ **Շիրակի** 2						
		85.	Կոտայք	Կոտայքի ՄՎ - Հրազդան ՀորավարԱնդրանիկի 1						
		86.	Կոտայք	Գառնի ՈԲ - գ. Գեղադիր 4-րդ փ. 4 շ.						
		87.	Կոտայք	Բյուրեղավան, ԺԲԿ հանրակացարան						
		88.	Կոտայք	Երևան Սևան մայրուղի, Աբովյանի անցակետ						
		89.	Շիրակ	**Շիրակի ՄՎ** - Գյումրի Պռոշյան 58						
		90.	Շիրակ	Անիի ՈԲ - ք. Մարալիկ, Երկաթուղայինների 1						
		91.	Շիրակ	Արթիկի ՈԲ - ք. Արթիկ Գորկու 4						
		92.	Շիրակ	Ամասիայի ՈԲ - **գ. Ամասիա 2-րդ փ. 2 շ.**						
		93.	Շիրակ	Ախուրյանի ՈԲ - գ. Ախուրյան Շիրակի **խճ.** 13						
		94.	Շիրակ	Աշոցքի ՈԲ - գ. Աշոցք 1 փողոց 12/1 շենք						
		95.	Շիրակ	Գյումրու Մուշի ՈԲ - Գյումրի Շիրակացի 17						
		96.	Շիրակ	Գյումրու ԿումայրիիՂորղանյան 91/1						
		97.	Շիրակ	Հանրային ծառայությունների միասնական կենտրոն - Կայարանամերձ հրպ. Ղանդիլյան փ. շ. 1						

		98.	Շիրակ	Շիրակ օդ. սահմանային կետ - հերթապահ մաս							
		99.	Շիրակ	Հեռուստաաշտարակ Պարեկային ծառայության համար - Գյումրի							
		102	Սյունիք	Գորիսի ՈԲ - Նարեկացի 3							
		103	Սյունիք	Կապանի ՈԲ Երկաթուղայինների 4							
		104	Սյունիք	Մեղրիի ՈԲՀորավարԱնդրանիկի 10							
		105	Սյունիք	Սիսիանի ՈԲ, ԳարեգինՆժդեհի 6							
		106	Սյունիք	ՍյունիքիՄՎ - Կապան ՄուշեղՀարությունյան 1Ա							
		107	Վայոց Ձոր	Վայքի ՈԲ - Երիտասարդական 2							
		108	Վայոց Ձոր	Եղեգնաձորի ՈԲ - Եղեգնաձոր Միկոյան 18							
		109	Վայոց Ձոր	Ջերմուկի ՈԲ - Ջերմուկ Մյասնիկյան 3							
		110	Վայոց Ձոր	ՎայոցՁորիՄՎ - Եղեգնաձոր Միկոյանի 1							
		111	Վայոց Ձոր	Գյուղ Խաչիկ, հերթապահ մաս							
		112	Վայոց Ձոր	Հանրային ծառայությունների միասնական կենտրոն - Եղեգնաձոր							
		113	Տավուշ	Տավուշի ՄՎ - Իջևան Մելիքբեկյան 6							
		114	Տավուշ	Իջևանի ՈԲ - Իջևան Երևանյան 13							
		115	Տավուշ	Հանրային ծառայությունների միասնական կենտրոն - Իջևան Երևանյան 10							

		116	Տավուշ	Դիլիջանի ՈԲ - Մյասնիկյան 57							
		117	Տավուշ	Տավուշի ՈԲ - ք.Բերդ, ԼևոնԲեկի 12							
		118	Տավուշ	Նոյեմբերյանի ՈԲ - Բարեկամության 4							
		119	Տավուշ	Հեռուստաաշտարակ - գ. Այրում							

Լրացուցիչ և պահուստային կապուղիների տրամադրում և սպասարկում –այդ թվում լիարժեք ինտեգրում առկա ծրագրային ապահովման համակարգին : Կապուղիների տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հետևյալ հասցեներում նշված թողունակությամբ:

	Տարածաշրջան	Հասցե	Տրամադրված կապուղի Մբիթ/վ
1.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
2.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
3.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	20
4.	Երևան	Նալբանդյան 130	10
5.	Երևան	Նալբանդյան 130	20
6.	Երևան	Շինարարների 10/1	10
7.	Երևան	Քաջազնունի 11	10
8.	Երևան	Չնքուշի 14	10
9.	Երևան	Պռոշյան 1	10
10.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10
11.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10
12.	Բյուրեղավան	ԺԲԿ հանրակացարան	10
13.	Հրազդան	Զորավար Անդրանիկի պող. 1	10
14.	Իջևան	Մելիքբեկյան 5	10
15.	Գավառ	Օգոստոսի 23, 36	10

		16.	Եղեգնաձոր	Միկոյան 1	10					
		17.	Գյումրի	Պռոշյան 58	10					
		18.	Կապան	Մուշեղ Հարությունյան 1ա	10					
		19.	Արմավիր	Հանրապետության 22	10					
		20.	Վանաձոր	Տիգրան Մեծի պ. 1	10					
		21.	գ. Փարաքար	Զվարթնոց օդ. **Հերթպահ մաս**	10					
		22.	Շիրակ օդ.	Շիրակ օդ. **Հերթպահ մաս**	10					
		23.	Աշտարակ	Երևանյան խճ. 1	10					
		24.	Արտաշատ	Օգոստոսի 23 , 122	10					
		25.	Շարժական 3G	5 հատ	10					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՖՎ և Գ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
Բանկ՝ «Արմսվիսբանկ» ԲԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
Հեռ: 010 20-81-72
Էլ. Փոստ: info@fvg.am

Վ. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավել
«03» 02 2026թ.
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ս-15 ծածկագրով պայմ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/5	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ		8 800 000	8 800 000	19 800 000	19 800 000	19 800 000	30 800 000	30 800 000	30 800 000	44 000 000	44 000 000	44 000 000	**44 000 00**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՖՎ և Գ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Ազատության 24, 4
շինություն
Բանկ՝ «Արմսվիսբանկ» ԲԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
Հեռ: 010 20-81-72
Էլ. Փոստ: info@fvg.am

Վ. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված 3
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ս-15 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/U-15 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.